Ես դուրս եկայ իմ բանտից, ես թողեցի դպրոցը – իմ մանկութեան, իմ տանջանքների «դժոխքը» — եւ միւս անգամ չվերադարձայ այնտեղ...

Ը. ՀԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Ազատելով իմ բանտից, ես վճռեցի միւս անգամ չվերադառնալ այնտեղ, եւ ոչ մեր տունը գնացի, որովհետեւ գիտէի, որ մայրս առաւօտեան կրկին ինձ կը տանէր տէրտէրի մօտ, եւ յանձնելով նրան, կասէր. — «միսը քեզ, ոսկորը ինձ»... Բայց ես այժմ հասկացել էի այդ սարսափելի խօսքի նշանակութիւնը, որ մայրս առաջին անգամ ինձ դպրոց տալու ժամանակ ասաց վարժապետիս:

Գիշեր էր, երբ ես դուրս եկայ բանտից. չգիտէի, թէ ուր գնամ: Յուսահատութիւնը մինչ այն աստիճան տիրել էր ինձ, որ մտածում էի. «էլ ուրիշ ճար չկայ, գնամ գետն ընկնեմ, գուցէ ազատեմ»...

Խորին վրդովմունքի մէջ ես անցայ մեր ամբողջ թաղը. փողոցների մէջ ոչ ոք չէր երեւում. դէպի ամէն կողմ տիրում էր խուլ լռութիւն: Ամէն ընտանիք, եկեղեցուց տուն դառնալով, ուրախ, զուարթ, բոլորել էր զատկական սեղանի շուրջը եւ ընթրիք էր վայելում: Բայց ես, որպէս փախստական, որպէս մի թշուառ դատապարտեալ, տեղ եւ օթեւան չունէի այս գիշեր: Տներից բուրում էր խնկի եւ կը նդրակի անուշահոտութիւնը. ամբողջ օդը լցուած էր այդ սրբազան բուրմունքով: Երբեմն իմ ականջին զարկում էին ուրախ բացականչութիւններ. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»... այո՛, յարեա՛ւ սիրոյ եւ խաղաղութեան աստուածը... Բայց որտե՞ղ էր սէրը, որտե՞ղ էր խաղաղութիւնը, որտե՞ղ էր եղբայրութիւնը, — ես իմ կեանքի մէջ այդ բաները ոչ մի տեղ չէի տեսել...

Իմ խռովութիւնը այժմ հասնում էր մինչեւ խելագարութեան... ես այժմ ոչինչ չէի լսում, ոչինչ չէի զգում: Ինձ մինչեւ անգամ անհասկանալի էին քաղցրաձայն տաղերգութիւնները, որ հնչւում էին այս եւ այն տան լուսամուտներից: Կարծես ամբողջ աշխարհը խլացել էր ինձ համար: Թէ ինչպէ՞ս յայտնուեցայ գետի ափի մօտ, — մինչեւ այսօր չգիտեմ, միայն յիշում եմ, երբ ես պատրաստւում էի ընկնել գետի գարնան հեղեղներից յորդացած ալիքների մէջ, ինձ կանգնեցրեց մի ձայն.

— Է՛յ, ի՞նչ ես անում:

Մի կողմից գիշերային մթութիւնը, միւս կողմից իմ խռովութիւնը, թոյլ չտուին իսկոյն ճանաչել նրան, բայց ինձ երեւաց, որ ձայնը բոլորովին ծանօթ էր: